Արտասահմանյան գրականության ծրագիր

10, 11-րդ դաս. համար

Ծրագրի նկարագրությունը և հիմնական դրույթները

Արտասահմանյան գրականության ծրագիրը նախատեսված է ավագ դպրոցի 10, 11-րդ դաս. համար: Սովորողներն արդեն ունեն ընթերցանության որոշակի հմտություններ, կարդացածը մեկնաբանելու, փաստերը համադրելու, համացանցում անհրաժեշտ նյութը գտնելու կոնկրետ հմտություններ: Ունեն կարդացած գրականության որոշակի քանակություն: Այս սովորողներին արդեն հնարավորություն է ընձեռնվում ծանոթանալ ժամանակակից արտասահմանյան գրականության բացառիկ նմուշներին: Ստեղծագործություններ, որոնցից շատերը համարվում են էլիտար գրականության նմուշներ՝ ենթատեքստային են, ենթամշակութային, պահանջում են արվեստի, գրականության, պատմության ու ընդհանուր զարգացողության որոշակի մակարդակ: Առաջարկված հեղինակներից շատերի գործերը էկրանավորված են, մեծ մասն էլ ունեն տարբեր հոլովակներ, մեդիա հարցազրույցներ, որոնց դիտումը համարվում է ծրագրի բաղկացուցիչ:

Ուսուցման համար անհրաժեշտ գործիքները

Ուսուցման համար անհրաժեշտ գործիքներն են՝ համացանցին միացված անհատական նոթբուք-նետբուքերը անհրաժեշտ ծրագրերով ներբեռնված, նաև՝ մոնտաժային ծրագրերով, ձայնագրիչը, ուժեղացուցիչը, ֆոտոխցիկը, տեսախցիկը, պրոյեկտորը:

Ուսուցման միջավայրը

Ուսուցման միջավայր կարող է դառնալ կրթահամալիրի ցանկացած ուսումնական տարածք՝ ընթերցասրահներ, մեդիադահլիճներ, ուսումնական լաբորատորիաներ, մեդիասրահներ: Ոսուցման արդյունավետ միջավար կարող է դառնալ նաև ամառային ընթերցասրահը, քաղաքային այգիները, ընթեցասրահները: Mskh.am կայքն իր հնարավորություններով, սովորողների անձնական բլոգները, համացանցը, սոցիալական ցանցերն ու պահոցները (facebook, skydrive, YouTube և այլն):

Գնահատումը

Առարկայի գնահատումը կատարվում է երկու նշանոց սանդղակով՝ ստուգված և չստուգված: Չստուգված են ստանում առաջարկված գրականության 60%-ը չնթերցած սովորողները, մեդիա առաջադրանքների 60%-ը չկատարած սովորողները:

Ստուգված կարող է ստանալ այն սովորողը, որը մեկ կիսամյակի կտրվածքով.

- ✓ Կարդացել է հանձնարարված գրականությունը
- ✓ Ունի հրապարակված հինգ նյութ
- ✓ Մասնակցություն մեկ կինոպոեզիայում
- ✓ Մասնակցություն երկու ռադիոպոեզիայում
- ✓ Երեք անգամ մասնակցել է կայքի առցանց գրական քննարկումներին
- ✓ Իր և ընկերների նյութերը պարբերաբար տարածել սոցցանցերում:

Ուսումնական գործունեության տեսակները

- Ընթերցանություն՝ մայրենի և օտար լեզուներով
- Ընթերցանության նյութի և այլ անհրաժեշտ տեղեկատվության որոնում համացանցում
- Վերլուծական շարադրանք
- Հետազոտական աշխատանք
- Մեկնաբանություն
- Թարգմանություն և խմբագրական աշխատանք
- Աուդիոնյութեր
- Տեսանյութեր
- Կինոպոեզիա
- Ռադիոպոեզիա
- Բեմականացում
- Ցուցադրություն (presentation)՝ բանավոր և մեդիա ելույթի տեսքով

Ուսումնական գործի կազմակերպումը

Ուսումնական գործունեությունը կազմակերպվում է դպրոցում և տանը, առկա և հեռակա ձևով:

Դասընթացին հատկացված ժամանակի 20%-ը հատկացվում է առցանց ուսուցմանը՝ գրական քննարկումներ msk.am-ում, սոցիալական ցանցերում, առցանց խորհրդատվություն:

Ուսումնական գործունեության ամբողջական արդյունքները հրապարակվում են կրթահամալիրի կայքում, ենթակայքում, «Լուսաստղ», առավել ընդգրկունները՝ «Դպիր» ամսագրերում սոցիալական ցանցերում, բլոգներում, yutube-ի ալիքներում և այլուր:

Սովորողների փոքրաքանակ խումբը հնարավորություն է տալիս դասընթացը դարձնել խիստ անհատականացված, գործնական և կոնկրետ: Դասընթացի առկա մասը կազմակերպվում է դասարանական անհատական ընթերցանության, հետազոտական անհատական և խմբային աշխատանքների, խոսքի և գրական ճաշակի ընկալմանն ուղղված գործնական աշխատանքի՝ կինոպոեզիա, ռադիոպոեզիա միջոցով:

Դասընթացը նաև լավագույն գործնական հնարավորություն է զարգացնելու օտար լեզվի հմտությունները. հանձնարարվող գրականության 10%, որոշ սովորողների դեպքում հնարավոր է նաև 50%-ը, ընթեցվում է բնագրով: Միջառարկայական կապն առավել տեսանելի ու գործուն է դառնում, երբ դրվում է հստակ առաջադրանք, խնդիր, որի կատարումը ենթադրում է նաև օտար լեզվի մասնագետի գործուն մասնակցություն-խորհրդատվությունը: Լեզվագործածության կարևոր խթան են նաև ֆիլմերը, հարցազրույցները, որոնք չունեն հայերեն թարգմանություն:

Բովանդակությունը

Ծրագրի բովանդակությունը կարող է փոփոխվել մեկ կիսամյակ հետո՝ ելնելով սովորողների գրական ընկալման մակարդակից, անհատական պահանջներից,

ընթերցման, յուրացման արագությունից: Ծրագիրը հնարավորություն է տալիս, երկամսյա մասնակցությունից հետո միայն, որովհետև միայն այս դեպքում սովորողը կկարողանա կողմնորոշվել առաջարկվող գրական խառնաշփոթում, լրացնել ծրագիրը: Նախատեսված ծրագրի որոշակի մաս բաց է՝ 5-7 գրական ստեղծագործություն, բացը լրացվում է սովորողի անհատական պատվերի միջովով:

Դասարանական ընթերցման համար նախատեսված գրականություն՝չափաց և արձակ ստեղծագործություններ՝պատմվածք, նովել, պիես, ակնարկ:

- ✓ Ուիթմեն, «Երգ իմ մասին», այլ բանաստեղծություններ
- ✓ Ալեն Գինզբերգ, «Արևածաղկի սուտրա», «Ոռնոց», «Կալիֆոռնիայի սուպերմարկետը», այլ բանաստեղծություններ
- ✓ Սենդբերգ, «Չիկագո», Քաղաքային էտյուդ», «Գիշերային Նյու Յորքում», այլ բանաստեղծություններ
- ✓ Էլիոթ, «Մոգերի ճամփորդությունը», «Սնամեջ մարդիկ», Նախերգանքներ»
- ✓ Վլադիմիր Նաբոկով, պատմվածքներ
- ✓ Հարուկի Մուրակամի, պատմվածքներ
- ✓ Խորխե Լուիս Բորխես, պատմվածքներ

Տնային ընթերցանության համար նախատեսված գրականություն

- ✓ Խալեդ Խոսեին, « Քամու հետևից վազողը», «Հազար շողացող արևներ»
- ✓ Վերկոր, «Ծովի լռությունը», «Սիլվիա», «Մարդիկ թե՞ կենդանիներ»
- ✓ Գաբրիել Գարսիա Մարկես, «Հարյուր տարվա մենություն», «Նահապետի աշունը», պատմվածքներ
- ✓ Օլդոս Հակսլի, «Հրաշք, զարմանալի աշխարհ»
- ✓ Ալբերտո Մորավիա, «Արհամարհանք»
- ✓ Կադզուօ Իսիգուրո, «Բաց մի թող ինձ»
- ✓ Բերխարդ Սլինք, «ԸՆթերցողը»
- ✓ Ջորջ Օրվել, «1984»
- ✓ Ալբեր Քամյու, «Ժանտախտը», «Օտարը»
- ✓ Հարուկի Մուրակամի, «Կաֆկան լողափում», «Նորվեգական անտառ»

Մարգարիտ Սարգսյան